Հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ
Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան,
ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան,

Ուղարկված է 10.03.2015
Ընդունված է 28.08.2015

Հակամարտությունների կարգավորումը շարունակում է համարվել ամենաբարդ խնդիրներից մեկը ժամանակակից միջազգային հարաբերություններում: Դրանց թիվն աշխարհում չի կրճատվում, կարգավորման գործընթացները հաճախ շարունակվում են տասնամյակներ: Հակամարտությունները միմյանցից տարբերվում են ինչպես առանձնահատկություններով, այնպես էլ կարգավորման արդյունավետությամբ: Դրանց ուսումնասիրության նպատակով հաճախ օգտագործվում է համեմատական վերլուծության մեթոդը: Սակայն նման ուսումնասիրությունների ընդհանուր մոդելավորման և ռազմավարության բացակայությունը նվազեցնում է ուսումնասիրությունների արդյունավետությունն ու վստահությունը դրանց արդյունքների նկատմամբ: Մինչդեռ հակամարտությունների համեմատական ուսումնասիրության ռազմավարության մոդելավորումը հնարավորություն կընձեռի բարձր հավաստիությամբ գնահատել հակամարտությունների կարգավորման գործընթացները, տարբեր ընթացքների պատճառներն ու այդ գործընթացներին խոչընդոտող գործոնները, կարգավորման գործընթացների զարգացման ընդհանուր միտումներն ու արդյունավետության բարձրացման հնարավորությունները: Հոդվածում դիտարկվում են հակամարտությունների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրներն ու դրանց լուծման հնարավորությունները:

Բանալի բառեր
Հակամարտություններ, համեմատական վերլուծություն, մոդելավորում, փոփոխականներ, բանաձևեր, հանգուցային իրադարձություններ, ինքնորոշման իրավունք:

Նախաբան

Թեև վերջին տասնամյակների ընթացքում հակամարտությունների կարգավորման գործընթացների ուսումնասիրության նպատակով բավական հաճախ է կիրառվում համեմատական վերլուծության մեթոդը, սակայն այդ գործընթացի ուսումնասիրման մոդելավորումը դժվար է խնդրի բարդության և մեծ թվով տարաբնույթ գործոնների առկայության պատճառով: Խնդիրն էլ ավելի է բարդացել ԽՍՀՄ

փլուզումից հետո նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացների հետևանքով, քանի որ ազդեցիկ պետությունները շատ հաճախ այդ գործընթացների զարգացումների վրա փորձում են ազդել հակամարտությունների կարգավորման խթանման կամ սառեցման միջոցով: Պատահական չէ, որ թեև վերջին տասնամյակների ընթացքում միջազգային իրավունքը լիարժեք հիմքեր է ստեղծել հակամարտությունների կարգավորման համար[1] և լիազորված միջազգային կազմակերպություններն ավելի հաճախ են հանդես գալիս միջնորդական առաքելությամբ, սակայն չկարգավորված հակամարտությունների թիվը շարունակում է աճել: Ստոկհոլմի միջազգային համալսարանում կատարված ուսումնասիրությունների համաձայն 2007 թվականին երկրագնդի տարբեր հատվածներում իրականացվել են ավելի քան 61 խաղաղարար գործողություններ՝ ուղղված հակամարտությունների ակտիվության նվազեցմանը, ինչն ամենաբարձր ցուցանիշն է 1999 թվականից հետո:[2]

Այս հոդվածի ուսումնասիրության առարկան էթնոքաղաքական հակամարտություններն են, նպատակը՝ դրանց կարգավորման գործընթացների ուսումնասիրման մոդելավորումը: Դրանք միմյանցից տարբերվում են քաղաքական (աշխարհաքաղաքական), իրավական, տնտեսական, պատմական և այլ առանձնահատկություններով, որոնցով պայմանավորված կարգավորման գործընթացները նույնպես կարող են միմյանցից էապես տարբերվել: Այդուհանդերձ, այդ գործընթացների ուսումնասիրման միջոցով կարելի է բացահայտել օրինաչափություններ, որոնց օգտագործումը հետագա ուսումնասիրությունների ժամանակ հնարավորություն կտա մեծացնել դրանց արդյունքների հավաստիությունը, հետևաբար և կարգավորման գործընթացների արդյունավետությունը: Էթնոքաղաքական հակամարտությունների ուսումնասիրման տեսակետից առանցքային նշանակություն ունի դրանց բնույթը:

---

[1] **Torosyan T.,** To the Resolution of Intractable Conflicts: Nagorno-Karabakh and Kosovo, *Iran and the Caucasus*, 2013, **17**, 3, 427-441.

[2] **Soder. K.,** Multilateral Peace Operations in 2007. Appendix 3A/SIPRI Yearbook 2008. Armaments, Disarmament and International Security. Stockholm. p. 113.

Հակամարտությունների կարգավորման գործընթացների ուսումնասիրման ռազմավարությունը

Հակամարտությունների բնույթը: Ըստ բնույթի էթնոքաղաքական հակամարտությունները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ ինքնորոշման և ոչ ինքնորոշման[3]: Այդ երկու խմբերի առանցքային տարբերությունն այն է, որ ինքնորոշման հակամարտությունների կարգավորման իրավական հիմքը ինքնորոշման իրավունքն է, մինչդեռ ոչ ինքնորոշման հակամարտությունների դեպքում այն չի կարող կիրառվել՝ անկախ այն բանից, որ հակամարտության կողմերից մեկը կարող է հայտարարել, թե ցանկանում է ինքնորոշվել: Նման դեպքերի համար (Հյուսիսային Կիպրոս, Սերբական հանրապետություն և այլն), միջազգային իրավունքը սահմանում է ինքնորոշման իրավունքի չկիրառման միակ պայմանը, որը գործում է, երբ ինքնորոշման ձգտող կողմն իր նպատակներին հասնելու համար կիրառում է ռազմական ագրեսիա կամ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործություն:[4] Հակամարտությունների կարգավորման գործընթացներն ունեն երկու հիմնական բաղադրիչներ՝ իրավական և քաղաքական[5]: Ինքնորոշման և ոչ ինքնորոշման հակամարտությունների իրավական բաղադրիչները սկզբունքորեն տարբերվում են միմյանցից: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ոչ ինքնորոշման հակամարտություններն ավելի հեշտ է կարգավորել (թեև կան նաև բարդ դեպքեր, օրինակ, Հյուսիսային Կիպրոսի խնդիրը, որը մնում է չլուծված մոտ չորս տասնամյակ): Պատճառն այն է, որ այդ դեպքերի կարգավորման քաղաքական բաղադրիչի տեսակետից խնդիրն ավելի պարզ է, քանի որ իրավական բաղադրիչն այս դեպքում պետության սահմանների փոփոխություն չի նախատեսում, նոր պետական միավորում չի ձևավորվում, այլ միայն պահանջվում է հաշտության եզրեր գտնել

---

[3] **Torosyan T.,** Perspectives of Rights and Challenges of Political Interests in Conflict Resolution: The Cases of Kosovo and Nagorno-Karabakh, *Essex Human Right Review*, 2015, **10**, 1.
Babbitt E., Mediating Rights-Based Conflicts: Self –Determination Negotiable, *Internatioanl Negosiation*, 2006, 11, 185-208.
[4] Accordance with International Law of the unilateral Declaration of Idependence in Respect of Kosovo. ICJ Advisory Opinion, 22.07.2010
[5] **Torosyan T.,** To the Resolution…

հակամարտող կողմերի միջև: Ինչ վերաբերում է ինքնորոշման հակամարտություններին, ապա այդ դեպքում ևս իրավական հիմքը հստակ ու սպառիչ է: Ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ հիմնարար փաստաթղթերը[6] սահմանում են, որ այն միջազգային իրավունքի բարձրագույն նորմ է և չի կարող ենթարկվել որևէ սահմանափակման: Անդամակցելով ՄԱԿ-ին՝ անդամ պետությունները, համաձայն կազմակերպության կանոնադրության 1.2 հոդվածի, պարտավորվում են իրականացնել թե՛ արտաքին, և թե՛ ներքին այնպիսի քաղաքականություն, որով կհարգվի ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը:[7] Ինքնորոշման հակամարտությունների հիմնախնդրի իրավական լուծումը (տարածքի քաղաքական կարգավիճակի որոշումը) միջազգային իրավունքը սահմանում է ըստ «ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրի. ինքնորոշվող ժողովուրդն իր ընտրությամբ կարող է կիրառել ինքնորոշման հետևյալ ձևերից մեկը՝

1. ինքնիշխան և անկախ պետության ստեղծում,
2. ազատ միացում որևէ անկախ պետության,
3. ասոցացված հարաբերություններ որևէ անկախ պետության հետ,
4. տվյալ ժողովրդի կողմից ազատորեն որոշված այլ ցանկացած քաղաքական կարգավիճակ:[8]

Հարկ է նշել, որ թեև քաղաքական նպատակահարմարությունից ելնելով ժամանակ առ ժամանակ կարծիքներ են հնչում[9], որ

---

[6] Declaration on Principles of International Law Friendly Relations And Co-Operation among States In accordance With The Charter Of The United Nations, http://www.unhcr.org/refworld/topic,459d17822,459d17a82,3dda1f104,0.html , 17.03.2015; Charter of the United Nations, http://www.un.org/en/documents/charter/, 18.03.2015, International Covenant on Civil and Political Rights, treaties.un.org/doc/Publication/UNTS/Volume%20999/volume-999-I-14668-English.pdf; Helsinki Final Act, http://www.osce.org/mc/39501, 18.03.2015.

[7] Charter of the United Nations, http://www.un.org/en/documents/charter/, 18.03.2015.

[8] Declaration …

ինքնորոշման իրավունքի և միջազգային իրավունքի մեկ այլ՝ տարածքային ամբողջականության սկզբունքի միջև կան հակասություններ, սակայն այդ պնդումներն անհիմն են[10] (ըստ սահմանման՝ տարածքային ամբողջականության իրավունքը կարգավորում է ճանաչված պետությունների միջև վեճերը, իսկ ինքնորոշման իրավունքը՝ ինքնորոշվող ժողովրդի և մետրոպոլիայի):

Այդուհանդերձ, ինչպես վերը նշվեց, հակամարտությունների նման բարդ խնդիրների կարգավորման գործընթացն ունենում է ոչ միայն իրավական, այլև քաղաքական բաղադրիչ և դրանց ներդաշնակությունից է կախված գործընթացի հաջողությունը: Կարգավորման գործընթացը սկսվում է քաղաքական բաղադրիչի՝ բանակցությունների միջոցով, որտեղ շատ մեծ է միջնորդների դերակատարությունը:[11] Ընդ որում, ինչքան բարդ է իրավիճակն, այնքան ավելի կարևոր է միջնորդների՝ իրավիճակը կառավարելու կարողությունը:[12] Միջազգային կառույցների ձգտումը՝ բանակցությունների միջոցով հակամարտությունների կարգավորման փոխզիջումային լուծման հասնելու ուղղությամբ, միանգամայն հասկանալի է: Տիրապետող է այն կարծիքը, որ այդ դեպքում ավելի հեշտ է հասնել հակամարտության կողմերի հաշտեցմանը: Սակայն ակնհայտ է, որ ինքնորոշման հակամարտությունների դեպքում, երբ կարգավորման հավանական ելքը ինքնորոշվող կողմի անջատումն ու անկախ պետության ձևավորումն է, մետրոպոլիան, որպես կանոն, չի համակերպվում նման լուծման հետ: Փոխզիջումային լուծման հասնելու հնարավորությունների սպառման և զինված բախումների վերսկսման վտանգի մեծացման դեպքում հակամարտությունների կանխարգելման կամ կարգավորման գործընթացներում ուղղակի կամ անուղղակի ձևով լիազորված և ներգրավված միջազգային կազմակերպություններն ունեն բոլոր անհրաժեշտ լծակներն՝ իրավական կարգավորում և վերջնական

---

[9] **Вельяминов Г.,** Признание “непризнанных” и международное право, *Россия в глобальной политике*, 2007, 1, 120-129; **Аксененок А.,** Самоопределение: между правом и политикой, *Россия в глобальной политике*, 2006, 5, 185-198.

[10] **Torosyan T.,** To the Resolution…

[11] **Torosyan T., Vardanyan A.,** The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics*, 2015, **20**, 3, 559-582.

[12] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, 2012թ., էջ 45:

լուծում ապահովելու համար: Այդ առումով միջազգային իրավունքի նորմերը լիարժեք և սպառիչ են: Ավելին, այդ կազմակերպություններում որոշումների ընդունման մեխանիզմները հնարավորություն են տալիս լրացնել դրանց գործառույթները՝ մեծացնելով արդյունավետության մակարդակը, ստեղծելով կառավարման ժամանակավոր կառույցներ:[13] Կարգավորման գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ի սկզբանե հստակորեն սահմանել հակամարտության բնույթը, կարգավորման իրավական շրջանակները, ինչպես նաև կիրառել միջազգային իրավական նորմերը:[14] Սակայն, այդ ամենը երբեմն անտեսվում է՝ ազդեցիկ պետությունների աշխարհաքաղաքական շահերով պայմանավորված: Աշխարհաքաղաքական մրցակցությունը հաճախ դառնում է հակամարտությունների խաղաղ կարգավորման հիմնական խաչընդոտներից մեկը, և ազդեցիկ տերությունների շահերի բախումը կամ դրա բացակայությունը տվյալ տարածաշրջանում կարող է որոշիչ ազդեցություն ունենալ հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա:[15] Դրանով է պայմանավորված չլուծված հակամարտությունների մեծ թիվը, որը ոչ թե կարգավորման հնարավորությունների սահմանափակության խնդիր է, այլ պետութ- յունների «հավաքական» քաղաքական կամքի բացակայության[16]՝ որպես ազդեցիկ պետությունների շահերի բախման, ինչպես նաև «կարծրացած»[17] քաղաքական տարաձայնությունների ազդեցության հետևանք: Դրա արդյունքում ոչ միայն ձգձգվում է հակամարտության լուծումն, այլև այն կարող է հանգեցնել ռազմական բախումների վերսկսման:

---

[13] **Կիրակոսյան Մ.,** Տարածքի ժամանակավոր միջազգային կառավարման արդյունավետության մեծացման հնարավորությունները, *Հայկական քաղաքագիտական հանդես,* 2014, 2, 117-140:

[14] **Ознобищев С.,** Международные конфликты: Бессилие силы и дефицит коллективной воли, *Мировая экономика и международные отношения*, 2009, 12 , 107-112.

[15] **Torosyan T., Vardanyan A., …**

[16] **Богатуров А.,** Экономика и политика в современных международных конфликтах, Москва, 2008.

[17] **Богатуров А.**, ...

Ուսումնասիրման մեթոդի ընտրություն: Արեն Լեյփհարտի «Համեմատական քաղաքագիտություն և համեմատական մեթոդ» հոդվածը[18] շրջադարձային նշանակություն ունեցավ քաղաքագիտական ուսումնասիրությունների մեթոդի ընտրության առումով և խթանեց նման ուսումնասիրությունների կտրուկ աճը 1970-ական թվականներին:[19] Հոդվածը համեմատական մեթոդի և փորձարարական, վիճակագրական և «առանձին դեպքի ուսումնասիրություն» (case study) մեթոդների համեմատական վերլուծություն է: Համեմատական մեթոդը սահմանելով որպես փոքր թվով դեպքերի վերլուծության հնարավորություն՝ Ա. Լեյփհարտն այն դիտարկում է վիճակագրական, փորձարարական և «առանձին դեպքի ուսումնասիրություն» մեթոդների հետ հարաբերակցությունում, պազելու համար, թե յուրաքանչյուր մեթոդի կիրառման դեպքում՝

- որքան արդյունավետ է կիրառվում տեսությունը՝ հակասական մոտեցումները դիտարկելիս,
- որոնք են անհրաժեշտ տվյալների ձեռք բերման դժվարությունները:[20]

Փորձարարական մեթոդը տրամադրում է հստակ չափանիշներ փորձարարական վերահսկողության միջոցով՝ բացառելով իրարամերժ բացատրությունները, սակայն քաղաքական վերլուծություններին առնչվող թեմաների վերաբերյալ ոչ միշտ է հնարավոր հավաքել բավարար թվով փորձարարական տվյալներ: Վիճակագրական մեթոդի կիրառման ժամանակ փորձ է արվում խուսափել իրարամերժ բացատրություններից, թեև թույլ, սակայն արժեքավոր վիճակագրական վերահսկողության միջոցով, բայց այդ դեպքում ևս ոչ միշտ է հնարավոր բավարար չափով ստույգ տվյալներ հավաքել: Այդ մեթոդն առավելապես կիրառելի է զարգացումների ընդհանուր միտումները բացահայտելու, այլ ոչ թե կոնկրետ դեպքի ուսումնասիրման

---

[18] **Lijphart A.,** Comparative Politics and Comparative Method, *The American Political Science Review*, 1971, **65**, 3, 682-693.

[19] **Merritt R., Rokkan S.,** Comparing Nations, the Use of Quantitative Data in Cross-National Research, Yale University Press, 1966, **Sartori G.,** Misformation in Comparative Politics, *The American Political Science Review*, 1970, **64**, 4, 1033-1053.

[20] **Collier D.,** Political Science: The State of Discipline II, Ada W. Finifter, ed. American Political Science Association, Washington, 1993, p. 105.

նպատակով:[21] Խնդիրն ավելի է բարդանում, երբ այդ երկու մեթոդները կիրառվում են հակամարտությունների ուսումնասիրության նպատակով, քանզի ոչ միշտ է հնարավոր պարզել հակամարտության փոփոխականների վերաբերյալ ստույգ տվյալներ (ծավալման սահմանները, փախստականների և ներքին տեղահանված անձանց քանակը և այլն), իսկ կարգավորման գործընթացի իրավական բաղադրիչի վերլուծության համար այդ մեթոդները գործնականում կիրառելի չեն: «Առանձին դեպքի ուսումնասիրություն» մեթոդն արդյունավետ է, երբ ուսումնասիրվում է գործընթացի առանձին բաղադրիչ (հատկապես՝ իրավականը, երբ համեմատության էտալոնը իրավական նորմերն են[22]): Այդ մեթոդի կիրառման ժամանակ վարկածները պարբերաբար փորձարկելու հնարավորություններն ավելի սահմանափակ են, քան մյուս մեթոդների կիրառման ժամանակ[23], իսկ երբ քննարկվում է կարգավորման գործընթացի քաղաքական բաղադրիչը, հատկապես՝ ազդեցիկ ուժերի քաղաքական շահերի լուրջ բախման առկայությամբ, այդ մեթոդի կիրառումն անօգուտ է:

Համեմատական մեթոդը միջանկյալ տեղ է զբաղեցնում քաղաքագիտական մեթոդների ուսումնասիրություններում կիրառվող մեթոդների շարքում՝ նշված երկու չափանիշների հիման վրա գնահատելիս: Այն ավելի թույլ հիմք է ապահովում վարկածները փորձարկելու համար, քան փորձարարական և վիճակագրական մեթոդները[24] և սահմանվում է որպես հիմնական կիրառելի մեթոդ փորձարարական, վիճակագրական և «առանձին դեպքի ուսումնասիրություն» մեթոդների հետ, որոնց կիրառումը միտված է պարզելու

---

[21] **Butler M. J.,** Crisis Bargaining and Third-Party Mediation: Bridging the Gap, *International Negotiation*, 2007, 12, 249-274**; Steiner B. H.,** Diplomatic Mediation as an Independent Variable, *International Negotiation*, 2009, 14, 7-40; **Bercovitch J. and Gartner S. S.,** Is There Method in the Madness of Mediation? Some Lessons for Mediators from Quntitive Studies of Mediation, *International Interactions*, 2006, 32 (4), 329-354.

[22] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, 2008թ.:

[23] **Levy J.**, Case Studies: Types, Designs, and Logics of Inference, *Conflict Management and Peace Science*, 2008, 25 (1-18), 1-19.

[24] **Lijphart A**., Comparative Politics and Comparative Method, The *American Political Science Review*, 1971, **65**, 3, 682-693.

զարգացումների ընդհանուր էմպիրիկ միտումները: Ի տարբերություն այդ երեք մեթոդների, համեմատական մեթոդը փոփոխականների միջև էմպիրիկ կապերը (օրինաչափությունները) բացահայտելու հնարավորություն է ընձեռում[25]:

Քաղաքագիտության մեջ կիրառվող համեմատության ձևերը մեծապես տարբերվում են և ներառում են վիճակագրական վերլուծություններ, փորձարարական հետազոտություններ և փաստերի ու իրադարձությունների ուսումնասիրություններ:[26] Վերջինները համեմատելով՝ հետազոտողը փորձում է գտնել ընդհանուր էմպիրիկ օրինաչափություններ, որոնք առնչվում են հասարակական գործընթացների զարգացումները կանխորոշող պայմաններին և երևույթների միաժամանակյա գոյությանը կամ հաջորդականությանը[27]: Այդ է պատճառը, որ համեմատական մեթոդը հակամարտությունների ուսումնասիրման ժամանակ մեծ կիրառում ունի:

Համեմատական մեթոդի կիրառումը հակամարտությունների ուսումնասիրման ժամանակ

Համեմատական վերլուծությունն օգտագործվում է ոչ միայն քաղաքական համակարգերի, ինստիտուտների ու գործընթացների, այլ նաև հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ուսումնասիրությունների նպատակով, քանզի դրանց տարաբնույթ զարգացումները շատ հաճախ հնարավոր չէ բացատրել զուտ տեսական սխեմաներով: Հետևաբար համեմատական վերլուծությունը կարևոր նշանակություն ունի ինչպես այդ զարգացումների կանխատեսման, խթանման կամ կանխարգելման, այնպես էլ դրանց արդյունավետության մեծացման տեսակետից: Մասնավորապես, հակամարտությունների համեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու հակամարտությունների սրման,

---

[25] **Kalleberg A.,** The Logic of Comparison: A Methodological Note on the Comparative Study of Political Systems, *World Politics*, 1966, 19, 13-26.

[26] **Collier D.,** Political Science: The State of Discipline II, Ada W. Finifter, ed. American Political Science Association, Washington, 1993, p. 105.

[27] **Mill J.,** How We Compare, Comparative Political Systems, New-York, Oxford University Press, 1991, p. 18.

ռազմական գործողությունների հրահրման կամ վերսկսման պատճառ ները, կարգավորման գործընթացում ներգրավված միջնորդների դերը և բանակցությունների արդյունավետությունը, միջազգային իրավունքի կիրառման արդյունավետությունը կոնկրետ հակամարտության կարգավորման գործընթացում և այլն, ինչպես նաև բացահայտում է ուսումնասիրվող հակամարտությունների ներքին և արտաքին փոփոխականների միջև կապերի բնույթը: Միաժամանակ, այն հնարավորություն է ստեղծում հակամարտությունների մեջ ներգրավված հասարակական միավորների՝ ժողովուրդների, հասարակությունների, ինչպես նաև մշակույթների նմանությունների ու առանձնահատկությունների բացահայտման և հիմնավորման համար:[28] Համեմատելով կարգավորման գործընթացները, դրանց կառուցվածքային տարրերը, երևույթները, հասկացությունները՝ փորձ է արվում բացահայտել դրանց ընդհանրությունները կամ առանձնահատկությունները: Համեմատական մեթոդի կիրառման հիմնական նպատակն է ցույց տալ, թե երկու և ավելի դեպքեր կամ գործընթացներ ինչ հատկանիշներով են միմյանցից տարբերվում կամ միմյանց նման, ինչպես նաև ստանալ էմպիրիկ ընդհանրացումներ՝ օրինաչափությունների, մոդելների, դասակարգումների կամ այլ տեսքով:

Ըստ Ապտերի[29], համեմատությունը էմպիրիկ իրադարձությունների և երևույթների հիման վրա գաղափարները միմյանց կապելու յուրահատուկ ձև է, որը բխում է քաղաքական փիլիսոփայությունից կամ տեսությունից: Առանձնացվում են համեմատական ուսումնասիրությունների հետևյալ սկզբունքները՝

- Համեմատությունը ներառում է վերացարկում, քանզի որոշ իրավիճակներ և որոշ գործընթացներ որպես այդպիսին համեմատվել չեն կարող: Յուրաքանչյուր երևույթ առանձնահատուկ է, ինչպես նաև՝ յուրաքանչյուր գործընթաց, ազգ, անհատ: Դրանց համեմատումը նշանակում է ընտրել դրանց

[28] **Smelser N**., On Comparative Analysis, Interdiscisciplinary and Internationalization in Sociology, XV International Congress, 2002.
[29] **Apter D.,** Comparative Politics, Old and New, A new Handbook of Political Science, New York, Oxford University Press, 1996, p 372.

որոշ տեսակներ կամ հասկացություններ և, ըստ այդմ, «աղավաղել» յուրահատկությունը և հստակությունը:

- Համեմատական ուսումնասիրություն կատարելուց առաջ պետք է ոչ միայն հստակեցնել հասկացություններն ու կատեգորիաները, այլ նաև հստակեցնել ուսումնասիրվող խնդրի չափանիշների համապատասխանությունը սոցիալական և քաղաքական իրավիճակի բաղադրիչներին:
- Անհրաժեշտ է հստակեցնել առանձնահատուկ բաղադրիչների չափանիշները, որոնք ներառվում են ընդհանուր վերլուծության կամ կոնկրետ խնդրի վերլուծության մեջ:
- Եթե փորձ է արվում զարգացնել քաղաքական տեսությունն, անհրաժեշտ է ձևակերպել վարկածներ, որոնք առաջանում են կամ հայեցակարգային սխեմաների բովանդակությունից կամ խնդրի ձևակերպումից:
- Վարկածների հարաբերությունների ձևակերպումը և դրանց ուսումնասիրությունները փաստարկված տվյալների հիման վրա երբեք չեն կարող հանգեցնել ապացույցների:
- Անհրաժեշտ է մշակել վարկածների շարքեր, այլ ոչ թե մեկ առանցքային վարկած:
- Համեմատական ուսումնասիրությունները, եթե անգամ չեն արդարացնում սպասելիքները քաղաքական տեսության բարելավման հարցում, ապա հիմք են նախապատրաստում տեսության աստիճանական և միասնական զարգացման համար: Այն համապատասխան պայմաններ է ստեղծում հասկանալու համար հասարակական համակարգը և ստիպում է գիտակցել, որ յուրաքանչյուր բան, անգամ եթե բնական կարող է համարվել, բացատրություն է պահանջում:
- Ամենամեծ վտանգը, որը կարող է առաջանալ համեմատական ուսումնասիրությունների ժամանակ վարկածներ առաջադրելիս, դրանց հնարավոր փոխհարաբերությունները պատկերացնելու դժվարությունն է: Այնուամենայնիվ, դրանից կարելի է

խուսափել, եթե տվյալները կուտակվեն վարկածի ձևակերպումից առաջ:[30]

Հիմնական խնդիրները, որոնք առաջանում են համեմատական մեթոդի կիրառման ժամանակ, պայմանավորված են երկու գործոններով՝ փոփոխականների թիվ և դեպքերի քանակ:[31] Ըստ այդմ, անհրաժեշտ է լուծել երկու խնդիր՝ ընտրել օպտիմալ թվով փոփոխականներ և ուսումնասիրության նպատակին համապատասխանող անհրաժեշտ թվով դեպքեր: Այս երկու խնդիրները սերտորեն փոխկապակցված են, իսկ դրանց լուծման հնարավորություններն, ընդհանուր դեպքում, մի քանիսն են՝

1. **Հնարավորինս մեծացնել դեպքերի թիվը:** Որոշ դեպքերում անհնար է ընդլայնել դեպքերի քանակը, քանզի խոչընդոտներ կստեղծվեն այդ դեպքերը վիճակագրական մեթոդի կիրառման հարթություն տեղափոխելու համար: Հարկ է հաշվի առնել, որ դիտարկվող դեպքերի ավելացման ցանկացած փորձ, եթե անգամ փոփոխությունները փոքր են, մեծացնում է որոշակի վերահսկողություն սահմանելու հնարավորությունները: Հակամարտությունների համեմատական վերլուծության ժամանակ ևս կարելի է մեծացնել դեպքերի քանակը, եթե իհարկե խոսքը չի վերաբերում՝

- ***Տարածաշրջանային համեմատություններին:*** Այս պարագայում ընտրվում է երկրների, հակամարտությունների մի համախումբ քաղաքական, մշակութային, տնտեսական և այլ ընդհանրությունների հիման վրա: Հետևաբար համեմատական վերլուծության առարկա պետք է դառնան այնպիսի երկրներ կամ հակամարտություններ, որոնք հնարավորինս նման են միմյանց ու համեմատելիության ու համարժեքության խնդիրներ չեն առաջացնում: Նմանօրինակ ուսումնասիրություններն ավելի արդյունավետ են, իսկ դրանցից բխող եզրակացություններն՝ ավելի հստակ:

---

[30] **Macridis R., Brown B.** (eds), Comparaitve Politics, Notes and Readings, Homewood, III, Dorsey Press, 1961.

[31] **Lijphart A.**, …

- ***Հակամարտությունների բնույթին***: Եթե հակամարտությունները միմյանցից տարբերվում են բնույթով, ապա առաջանում է փոփոխականների հստակեցման խնդիր: Առավել բարդ է համեմատել օրինակ, կրոնական և էթնոքաղաքական հակամարտությունները՝ փոփոխականների ոչ հստակ շրջանակ ունենալու պատճառով: Ըստ բնույթի արմատապես տարբերվող (օրինակ, ինքնորոշման և ոչ ինքնորոշման) հակամարտությունների համեմատությունն անիմաստ է:

2. Կրճատել վերլուծության «տարածքը»: Եթե հնարավոր չէ մեծացնել դեպքերի քանակը, ապա կարելի է միացնել երկու կամ ավելի փոփոխականներ, որոնք մեկ փոփոխականի տեսքով արտահայտում են էապես նման հատկանիշներ: Խնդրի լուծման այդ տարբերակը ևս կիրառելի է հակամարտությունների համեմատական վերլուծության պարագայում, քանզի հնարավոր է զուգակցել, օրինակ, անկախության հանրաքվեի անցկացումն ու անկախության հռչակումը, զինված բախումների սկիզբն ու հակամարտության ծավալման սահմանները և այլն:

3. Համեմատական վերլուծություն իրականացնել «համեմատելի» դեպքերի հիման վրա: «Համեմատելի» նշանակում է մի քանի հատկանիշներով կամ փոփոխականներով միմյանց նման դեպքեր: Նմանատիպ հետազոտության իրականացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում համեմատական մեթոդի կիրառման համար, քանզի դրանք թույլ են տալիս բացահայտել կապերն ու դրանց օրինաչափությունները մի քանի փոփոխականների միջև, մինչդեռ մի շարք այլ փոփոխականներ որպես հաստատուններ են դիտարկվում[32]: Ավելի արդյունավետ է երկու և ավելի այնպիսի հասարակությունների կամ քաղաքական գործընթացների համեմատությունը, որոնք ունեն ավելի մեծ թվով ընդհանուր հատկանիշներ, քան համընդհանուր կամ համազգային համեմատությունը:[33]

4. Համեմատական վերլուծություն կատարել «հիմնական» փոփոխականների հիման վրա: «Բազմաթիվ» փոփոխականների

---

[32] **Smelser N.,** On Comparative Analysis, Interdiscisciplinary and Internationalization in Sociology, XV International Congress, 2002.

[33] **Linz J., Miguel de A.,** Within Nation, Differences and Comparisons, The Eight Spains, Madrid, 1966, pp. 268.

խնդիրը կարող է մեղմացվել ոչ միայն վերոնշյալ մոտեցումների հիման վրա, այլ նաև փոքրացնելով ընդհանուր տեսական հիմքը: Համեմատական վերլուծության ժամանակ պետք է խուսափել փոփոխականների գերծանրաբեռնվածությունից[34]:

Հեշտ է նկատել, որ այդ չորս հնարավորությունների շարքում առանձնահատուկ նշանակություն ունի քննարկվող դեպքերի համեմատելիության անհրաժեշտ մակարդակի ապահովումը, քանի որ այդ դեպքում մյուս երեքի ազդեցությունը ուսումնասիրության արդյունքների որակի վրա կտրուկ նվազում է: Մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի դեպքում Կոսովոյի դեպքի հետ համեմատական վերլուծությունը սպառիչ պատասխան է տալիս բոլոր հարցերին և համեմատվող դեպքերի թվի մեծացում չի պահանջվում: Համեմատական վերլուծության մեթոդը բարձր արդյունավետություն ունեցող գործիք է քաղաքագիտական հետազոտությունների ժամանակ:[35] Հակամարտությունների ուսումնասիրման դեպքում այդ մեթոդի կիրառումը նպատակ ունի գնահատել հակամարտությունների կարգավորման ընթացքը, ճշգրտել գործընթացի վրա ազդող գործոնները, որոնք կարող են պայմանավորված լինել ինչպես ներքին (կողմերի առանձնահատկություններ, հակամարտությունների բնույթ և այլն), այնպես էլ արտաքին հանգամանքներով (աշխարհաքաղաքական մրցակցություն, միջնորդների շահեր և այլն): Թեև համեմատական վերլուծության մեթոդը հակամարտությունների ուսումնասիրման նպատակով բավական հաճախ է կիրառվում, սակայն այն կարող է արդյունավետ լինել, եթե ճիշտ են ընտրված

- Հետազոտական խնդիրը (առաջադրված վարկածը),
- Համեմատվող հակամարտությունների դեպքերը և թիվը,
- Համեմատվող փոփոխականների շրջանակը:

Համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները

[34] **Lijphart A.,** ...:
[35] **Lijphart A.,** ...:

Համեմատական վերլուծության մեթոդի կիրառմամբ հաճախ փորձ է արվում լուծել հակամարտությունների ուսումնասիրման ոլորտի հետևյալ հիմնախնդիրը. ի՞նչու որոշ հակամարտությունների կարգավորման գործընթացը շատ ավելի արդյունավետ է ու հանգեցնում է լուծման, իսկ դրանց բավական նման այլ դեպքերում կարգավորման գործընթացը ոչ միայն շատ է ձգձգվում, այլև երբեմն հանգեցնում է զինված բախումների վերսկսման: Հեշտ է նկատել, որ քաղաքագիտական այլ ոլորտներում ևս առկա են նույն բնույթի հիմնախնդիրներ: Մասնավորապես, անցումագիտության կարևորագույն հարցերից մեկը հետևյալն է. ի՞նչու որոշ երկրներում ժողովրդավարության հաստատումը բարեհաջող ավարտ է ունենում, մինչդեռ նման մեկնարկային պայմաններ ունեցող այլ երկրների դեպքում այդ գործընթացը ձախողվում է: Օրինակ, ԽՍՀՄ փլուզումից ընդամենը մի քանի տարի անց ակնհայտ դարձավ, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում գտնվող երկրները, թեև ընդհանուր առմամբ ունեին վերջին մի քանի տասնամյակի ընդհանուր անցյալ, այդ գործընթացի նույն մեկնարկային պայմանները, սակայն նրանց հետագիծը և անցման նպատակակետն ու հանգրվանը գտնվում էին չափազանց լայն միջակայք ընդգրկող տիրույթում: Երկրների մի մասում ոչ միայն ժողովրդավարություն չհաստատվեց, այլև ամրապնդվեցին ավտորիտար ռեժիմներն ու որոշ դեպքերում նույնիսկ հաստատ-վեցին բռնատիրական ռեժիմներ[36]: Անցումագիտության մեջ ժողովրդավարական վարչակարգերի հաստատմանը նպաստող գործոնները ուսումնասիրվում են երկու ուղղությունների շրջանակներում՝ կառուցվածքային և ընթացակարգային[37] և վերոհիշյալ նմանությունը կարող է խթանել այդ մոտեցման կիրառումը հակամարտությունների ուսումնասիրման նպատակով:

---

[36] **Թորոսյան Տ.,** Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա: Գիտություն, Երևան, 2006թ., էջ 31:

[37] **Мельвиль А.,** Опыт теоретико-методологического синтеза структурного и процедурного подхода к демократическим транзитам, *Полис*, 1998, 2, 6-38.

Հետազոտողներն, ովքեր ուսումնասիրություններ են կատարում կառուցվածքային ուղղության շրջանակներում, անդրադառնում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են միջազգային հանրության ազդեցությունը ժողովրդավարացման գործընթացների վրա, տվյալ պետության տնտեսության զարգացման մակարդակը, ժողովրդավարական ինստիտուտների և արժեքների գոյությունը հասարակության մեջ, և այլն: Ընթացակարգային խնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունների առարկան, առաջին հերթին, քաղաքական որոշումների ընդունումն է կամ ուղղակիորեն տվյալ պետության վարած քաղաքականությունը (թե՛ ներքին, և թե՛ արտաքին):

Հակամարտությունների համեմատական վերլուծության դեպքում ևս որոշ ուսումնասիրողներ նախընտրում են կառուցվածքային, ոմանք էլ՝ ընթացակարգային փոփոխականների վերլուծությունը: Այն դեպքում, երբ կարևորվում են կառուցվածքային փոփոխականները, ենթադրվում է հասարակության կառուցվածքի, տնտեսության զարգացածության մակարդակի և նման այլ գործոնների համակողմանի ուսումնասիրություն[38]: Ըստ Լեբեդևայի, հակամարտությունների զարգացման վրա ազդող կառուցվածքային փոփոխականներն են՝

- տարբեր էթնիկ խմբերի առկայությունը,
- զգալի տարածքային մասնատվածությունը, պետության կենտրոնացածության մակարդակը,
- զգալի սոցիալ-քաղաքական փոփոխությունների առկայությունը (ի հայտ են գալիս նոր քաղաքական կամ տնտեսական էլիտաներ),
- կոնֆլիկտային իրավիճակի լուծմանն աջակցելու համար ինստիտուտների և մեխանիզմների զարգացածության մակարդակը, ինչպես նաև իրավական համակարգերի գործունեությունը,

[38] **Bloomfield L., Moulton A.,** Managing International Conflicts: From Theory To Policy, New York, 1997, **Лебедева М.,** Политическое урегулирование конфликтов: Подходы, решения, технологии, Москва, 1997.

- հասարակության մեջ համաձայնության մշակույթի մակարդակը[39]:

Ակնհայտ է, որ կառուցվածքային փոփոխականները բնութագրում են հակամարտության այս կամ այն կողմի վիճակն ու ներուժը և օգտակար կլինեն կարգավորման համար միայն հակամարտութանն ուղղակիորեն վերաբերող փոփոխականների հետ դիտարկելիս: Ընթացակարգային կամ կախյալ փոփոխականների (հակամարտության մասնակիցների, երրորդ կողմի վարած քաղաքականությունը և այլն) հիման վրա կատարված համեմատական վերլուծության պարագայում ևս առաջանում են նմանատիպ լուրջ դժվարություններ: Հետևաբար, թեև մեծ ֆորմալ նմանություն կա հետխորհրդային տրանսֆորմացիայի և հակամարտությունների ուսումնասիրման հիմնախնդիրների ձևակերպումների միջև, սակայն փոփոխականների բաժանումը կառուցվածքային և ընթացակարգային խմբերի արդյունավետ է հետխորհրդային տրանսֆորմացիայի, բայց ոչ՝ հակամարտությունների ուսումնասիրման ժամանակ:

Վերլուծության մեթոդի ընտրություն: Համեմատական վերլուծության ժամանակ, հատկապես՝ իրավական բաղադրիչի վերլուծության դեպքում, հաճախ նախապատվություն է տրվում ուսումնասիրման դեդուկտիվ մեթոդին[40], որի դեպքում տեսական դատողությունների այս կամ այն համակարգը կիրառվում է կոնկրետ հակամարտությունների ուսումնասիրման նպատակով՝ փորձելով բացահայտել այդ դատողությունների համապատասխանությունը տվյալ դեպքին: Այս մեթոդի հիմնական թերությունն այն է, որ եթե հակամարտության վրա այս կամ այն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեցող գործոնը (փոփոխականը) չի համապատասխանում տեսությանն, այն անտեսվում է՝ փորձելով պահպանել տեսության լիարժեքությունը, մինչդեռ դա կարող է աղավաղել իրական պատկերի ամբողջականությունը և հանգեցնել ոչ ճիշտ հետևությունների: Հետևաբար, պահանջվում է լրացուցիչ ուսումնասի-

---

[39] **Лебедева М.,** Межэтнические конфликты на рубеже веков (методологический аспект). *Мировая экономика и международные отношения*, 2000, 5, 31-39.

[40] **Лебедева М.,** Самоопределение регионов. Взгляд из Претории, *Международная жизнь*, 1994, 11, 84-86.

րություն՝ պարզելու համար, թե արդյոք աղավաղումը թույլատրելի սահմաններում է: Երբ հակամարտությունների հետազոտական խնդրի վերաբերյալ առկա է ոչ թե տեսություն, այլ միայն էմպիրիկ տվյալների համախումբ, համեմատական վերլուծության ժամանակ կիրառվում է ինդուկտիվ մեթոդը՝ փաստերի ընդհանրացումների արդյունքում ի հայտ եկած օրինաչափությունները բացահայտելու նպատակով:[41] Սակայն միայն ինդուկտիվ մեթոդի կիրառումը հակամարտությունների համեմատական վերլուծության նպատակով կարող է բավարար չլինել, կարող են անտեսվել հակամարտության ընթացքի և հանգուցալուծման վրա ազդող այնպիսի լուրջ գործոններ (փոփոխականներ), որոնց վերաբերյալ տեսական ընդհանրացումները բացակայում են: Ինդուկտիվ մեթոդի կիրառելիության ևս մեկ խոչընդոտ էլ մեծ ծավալի էմպիրիկ տվյալների օգտագործման անհրաժեշտությունն է, որը միշտ չէ, որ հնարավոր է՝ կապված հակամարտության բարդ ընթացքի հետ: Դա է պատճառը, որ սոսկ ինդուկտիվ մեթոդն՝ առանց համադրելու այլ մեթոդների հետ, հազվադեպ է կիրառվում հակամարտությունների համեմատական վերլուծության ժամանակ: Համակողմանի ուսումնասիրության համար կարելի է համադրել ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդների կիրառումը, որի դեպքում տեսական դատողությունների և փաստերի համապատասխանության վերլուծությունը հնարավորինս հավաստի կլինի:

Հակամարտությունների համեմատական վերլուծության ժամանակ կարևոր է ոչ միայն կիրառվող մեթոդների ընտրությունն, այլ նաև փոփոխականների առանձնացումն՝ ըստ ուսումնասիրության (խնդրի) նպատակի, հետևաբար և քննարկվող երևույթի (երևույթների): ***Հակամարտությունների համեմատական վերլուծության փոփոխականների ընտրություն:*** Վերլուծության փոփոխականների (հակամարտության բնույթ, ակտիվություն, կարգավորման գործընթացում ներգրավված միջնորդների շահեր, միջազգային կազմակերպությունների ներգրավածության մակարդակ, աշխարհաքաղաքական մրցակցություն ու շահերի բախում տվյալ տարածաշրջանում և այլն) ընտրությունն առանձնահատուկ է կոնկրետ հակամարտության

[41] **Лебедева М.,** Межэтнические …

համար և դրանց համախմբի ընտրությունը յուրաքանչյուր դեպքում կախված է հետազոտական խնդրի դրվածքից: Միաժամանակ, յուրաքանչյուր ուսումնասիրության արդյունքը կախված է ոչ միայն հետազոտության ռազմավարությունից ու խնդրի դրվածքից, այլև օգտագործվող փոփոխականների ճիշտ ընտրությունից: Տարբեր դեպքերի համեմատական վերլուծության համար առանձնացվում են տարբեր փոփոխականների համախմբեր, որոնցից յուրաքանչյուրը կիրառելի է միայն կոնկրետ դեպքի համար:

Ընդհանուր դեպքում վերը բերված վերլուծության հիման վրա կառուցվող հակամարտությունների հետազոտության ռազմավարությունը կարելի է ներկայացնել նկար 1-ում բերված սխեմայի տեսքով:

Նկար 1. Հակամարտությունների ուսումնասիրման ռազմավարության ընդհանուր սխեման:



Հետազոտության ռազմավարության և փոփոխականների ընտրության ազդեցությունը կատարվող հետազոտությունների արդյունքի վրա ակնառու երևում է ստորև բերված կոնկրետ հակամարտությունների համեմատական վերլուծության մի քանի դեպքերի օրինակով:

Հյուսիսային Իռլանդիայի և Չեչնիայի հակամարտությունների համար[42] Ի. Բուսիգինան համեմատական վերլուծությունն իրականացրել է հետևյալ փոփոխականների հիման վրա՝

- հակամարտությունների նախապատմություն,
- ժողովրդավարական ընտրությունների անցկացման հնարավորություններ և արդյունքներ,
- ներգրավված միջնորդներ,
- հասարակության տարբեր շերտերի ներգրավվածություն հակամարտությունների հնարավոր լուծման գործընթացում,
- բանակցություններ,
- վերջնական քաղաքական կարգավիճակի որոշման խնդիրներ:[43]

Հեշտ է համոզվել, որ հետազոտությունը չի համապատասխանում նկ. 1–ում բերված ռազմավարությանը: Չկա Չեչնիայի հակամարտության բնույթը բացահայտող վերլուծություն կամ հղում, մինչդեռ Հյուսիսային Իռլանդիայի հակամարտությունն ինքնորոշման է[44], Չեչնիայի դեպքում հասարակության ինքնակազմակերպման սկզբունքները բացարձակապես այլ են, այդպիսին է պատկերը նաև միջնորդների ներգրավվածության առումով և այլն: Նման տարբերությունների դեպքում, երբ չեն ապահովվում առաջարկվող ռազմավարության սկզբունքները հակամարտության բնույթի որոշում, համեմատելի հակամարտությունների դիտարկում և այլն, ուսումնասիրության արդյունավետությունը ցածր է կարգավորման գործընթացի բարելավման կամ հետագա զարգացումների կանխատեսման տեսակետից:

Է. Բաբիթը Լեռնային Ղարաբաղի և Հյուսիսային Իռլանդիայի հակամարտությունների համեմատական վերլուծության համար առանձնացրել է հետևյալ չափանիշները՝

- միջնորդների դերը,
- գերտերությունների ներգրավվածությունը կարգավորման գործընթացում,

---

[42] **Бусыгина И.,** Северная Ирландия и Чечня: некоторые параллели.–*Мировая экономика и международные отношения*, 1996, 11, 109-113.
[43] **Бусыгина И.,** …
[44] **Babbitt E., …**

- քաղաքականության կամ առաջնորդի պատասխանատվությունը,
- նորմատիվային կանոնների կիրառման խնդիրները:[45]

Ըստ նկ. 1–ում բերված ռազմավարության՝ համեմատվող հակամարտությունները ճիշտ են ընտրված՝ որպես նույն (ինքնորոշման) բնույթ ունեցողներ: Հիմնական շեշտը դրված է ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման և միջնորդների դերակատարության վրա: Հոդվածում ներկայացված են նաև ինքնորոշման հակամարտություններում միջնորդների գործունեության արդյունավետության բարձրացման մեխանիզմները: Սակայն հեղինակը չի անդրադարձել հակամարտությունների վերաբերյալ ընդունված բանաձևերին ու հանգուցային իրադարձություններին, ինչը շատ կարևոր է համեմատվող դեպքերի էական տարբերությունները բացահայտելու տեսակետից: Մինչդեռ, դիտարկվող հակամարտություններն ունեն էական տարբերություններ՝ միանգամայն այլ է աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունն, իսկ հակամարտության կողմերի տարբերությունները ոչ միայն դավանաբանական են, ինչպես Հուսիսային Իռլանդիայի դեպքում, այլև, ինչպես Լեռնային Ղարաբաղի դեպքում՝ քաղաքակրթական: Այդ տարբերությունները զգալի ազդեցություն են ունեցել կարգավորման գործընթացների վրա, հետևաբար արդյունավետ եզրակացություններ ապահովելու նպատակով պահանջվում էր նույն բնույթի այլ հակամարտությունների դիտարկում ևս:

Ինչպես երևում է այս օրինակից, հակամարտությունների համեմատական վերլուծության ժամանակ հաճախ անհրաժեշտ է առնվազն մի քանի դեպքերի դիտարկում: Այդուհանդերձ, առանձին դեպքերում կարող է բավարար լինել նաև երկու հակամարտությունների համեմատական վերլուծությունը: Մասնավորապես, այդպիսին է ինքնորոշման, բնույթ ունեցող Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների համեմատական վերլուծությունը:[46] Այն իրականացվել է երկու հիմնական բաղադրիչների հիման վրա՝

---

[45] **Babbitt E.,…**

[46] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, 2012թ.:

1. կարգավորման փաստաթղթերի համեմատական վերլուծություն,
2. հակամարտությունների առանցքային իրադարձությունների համեմատական վերլուծություն:

Առանցքային իրադարձությունների համեմատական վերլուծության ժամանակ կիրառված բաղադրիչները հետևյալներն են՝ կարգավիճակը մինչև հակամարտությունը, դրա հաստատման միջավայրը և ձևը, թվային գերակշռություն ունեցող ժողովուդն ըստ մարդահամարի, բողոքի ակցիաներ ճնշումների դեմ և դրանց ձևերը, կարգավիճակի լուծարում, անկախության հռչակում, հանրաքվե, մետրոպոլիայի ճնշումներ, հակամարտության ծավալման սահմաններ, զինված բախումներ, արտաքին ռազմական միջամտություն, հատուկ կարգավիճակ, զինված բախումների վերսկսման փաստ, փախստականների խնդիրներ, հակամարտության կարգավորմամբ զբաղվող միջազգային կազմակերպություններ, անկախության հռչակում բանակցությունների տապալումից հետո, տարբեր պետությունների կողմից անկախության ճանաչման փաստ, ինչպես նաև Արդարադատության միջազգային դատարանի կարծիք:[47] Քանի որ մինչ այդ առանձին ուսումնասիրության առարկա էին դարձել ինքնորոշման իրավունքի կարգավիճակը միջազգային իրավունքի շրջանակներում, կիրառման ձևերն ու չափանիշները և դրանց կիրառումը Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի դեպքերի համար[48], դա հիմք է ընդունվել այդ հակամարտությունների բնույթի որոշման համար՝ որպես համեմաական վերլուծության առանցքային գործոն: Հատկանշական է, որ շահագրգիռ երկրներն, անգամ ամենաազդեցիկ տերությունները, ինքնորոշման հակամարտությունների դեպքում ստիպված են այս կամ այն ձևով հաշվի նստել իրավական գործոնի, հետևաբար նաև հակամարտությունների բնույթի հետ:[49]

Եզրակացություն

---

[47] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո…, էջ 263:
[48] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղի հակամարտության…
[49] **Թորոսյան Տ.,** Լեռնային Ղարաբաղ և Կոսովո…, էջ 277:

Հակամարտությունների կարգավորման գործընթացների ուսումնասիրման նպատակով համեմատական վերլուծության մեթոդի կիրառման առանձնահատկությունների և արդյունավետության վերլուծությունը ցույց է տալիս, որ՝

1. Այդ մեթոդի կիրառման արդյունավետության ապահովման տեսակետից առանցքային նշանակություն ունի համեմատվող հակամարտությունների բնույթների նույնությունը: Այդ պատճառով, մինչ համեմատական վերլուծության մեթոդի կիրառումն, անհրաժեշտ է որոշել համեմատվող հակամարտությունների բնույթը՝ միջազգային իրավունքի նորմերի հիման վրա պարզել, արդյոք հակամարտություններն ինքնորոշման են, թե ոչ:
2. Հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների համեմատական վերլուծության արդյունավետության ապահովման նպատակով այն հարկ է իրականացնել երկու չափումներով՝ հանգուցային իրադարձություններ և միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևեր:
3. Հանգուցային իրադարձությունների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս գնահատել հակամարտության կարգավորման ընթացքը, պարզել հակամարտության կարգավորման գործընթացի վրա տարբեր գործոնների ազդեցության բնույթը, վերանայել բանակցային ռազմավարությունն ու մարտավարությունը: Այդ վերլուծությունն, անհրաժեշտ ծավալի տվյալների բազայի առկայության պարագայում հնարավորություն է տալիս նաև ճշտել փոփոխականների ազդեցության հավանական շրջանակները, ինչը կդյուրացնի այլ հակամարտությունների ուսումնասիրման ժամանակ դիտարկվող փոփոխականների շրջանակի ընտրությունը՝ կախված խնդրի դրվածքից:
4. Հակամարտությունների կարգավորման լիազորություններ ունեցող կամ ազդեցիկ միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևերի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում պարզել, թե ինչպիսին է այդ կազմակերպության, հետևաբար և միջազգային հանրության մոտեցումը տվյալ հակամարտության կարգավորման հեռանկարների, դրանց իրականացման ընթացքում այդ կազմակերպության դերակատարության շրջանակների վերաբերյալ: Առանձին

ուսումնասիրության առարկա է ազդեցիկ անդամ երկրների քվեարկություններին և բանաձևերի ձևավորման ընթացքում ունեցած դերակատարության վերաբերյալ տվյալների համախումբը:

5. Հակամարտությունների կարգավորման գործընթացների վերլուծության նպատակով համեմատական մեթոդի կիրառման ժամանակ հատկապես կարևոր է համեմատվող դեպքերի թվի և դիտարկվող փոփոխականների համախմբի ընտրությունը: Հատկապես բարդ է վերջին խնդիրը, քանի որ դրա արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է պարզել փոփոխականների հնարավոր կապերն ու փոխազդեցությունների շրջանակը:

Comparative Analysis of Conflicts: Modeling Problems

TIGRAN TOROSYAN
Brusov State University of Languages and Social Sciences, Armenia
Center of Perspective Researches and Initiatives

MARGARIT PETROSYAN
Brusov State University of Languages and Social Sciences

Conflict regulation remains among the most complicated issues in modern international relations. Their number is not reduced worldwide; the regulation processes often last for decades. Conflicts vary both in their characteristics and regulation process efficiency. Their studies are often conducted using the method of comparative analysis. However, the lack of a common strategy and modeling reduces the efficiency of such studies and the reliance on their results. Whereas the modeling of a strategy applicable to the comparative study of conflicts will enable to make highly reliable assessments regarding conflict regulation processes, the reasons behind different courses, the factors hindering these processes, as well as the general trends of regulation processes and the possibilities of increasing their efficiency. The article discusses the modeling problems concerning comparative analysis of conflicts and the possibilities of their solutions.